ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբերի 2026 թվականի N 559-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝
Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության նշված թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ:
1) ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին և երկրորդ կարգի մասնագետների (ծածկագիր՝3.2-1,3.2-7,3.3-1,3.3-5,3.3-6,3.3-7,3.3-9, 3.3-11 և 3.3-12) մրցույթները կայանալու է ս/թ նոյեմբերի 20-ին՝ժամը 11:00-ին:
2.Մրցույթների անցկացման մասին տալ հայտարարություն http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետի աշխատակազմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 560-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025թ. նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանը և հաշվի առնելով առնելով քաղաքացի Համլետ Ղարիբի Մխիթարյանի /մուտք 15.10.2026թ. թիվ 1067/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Չկալով գյուղի կադաստրային քարտեզի 06-089-0023-0001 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Չկալով, 3-րդ փողոց, 8 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2026 թվականի N 561-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025թ. նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանը և հաշվի առնելով առնելով քաղաքացի Համլետ Ղարիբի Մխիթարյանի /մուտք 15.10.2026թ. թիվ 1067/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Չկալով գյուղի կադաստրային քարտեզի 06-089-0023-0007 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Չկալով, 12-րդ փողոց, 3 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 562-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՏԵՂ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0049-0005 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ և 42-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտ արված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցվածքնակելի տունը և օժանդակ շինություններըչի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող <<ԱՍՏՐՈԼԱԲ>> ՍՊԸ-իկողմից չափագրված անասնաշենքի և օժանդակ շինությունների հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը /20266QMRQC/ և Արմենակ Վոլոդյայի Հախվերդյանի /մուտք՝ 15.10.2026թ. թիվ 1066/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաշվի առնելով <<ԱՍՏՐՈԼԱԲ>> ՍՊԸ- կողմից տրված չափագրումը՝ օրինականացնել Արմենակ Վոլոդյայի Հախվերդյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնք,գ. Դսեղ 44-րդ փողոց, թիվ 7հասցեում, 06-035-0049-0005 կադաստրային ծածկագրով 0,07841 հա մակերեսով հողամասում 2006թ.ինքնակամ կառուցված ընդհանուր 112,3 քմ մակերեսով անասնաշենքը,անասնաշենքի բաց պատշգամբը և պարիսպը:
2. Թումանյանի համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին ինքնակամ կառուցված ընդհանուր 112,3 քմ մակերեսով անասնաշենքը,անասնաշենքի բաց պատշգամբը և պարիսպը օրինականացնելու համար վճարել 83102 /ութսուն հազար հարյուր երկու/ ՀՀ դրամ:
3.06-035-0049-0005 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Դսեղ 44-րդ փողոց, 7 անասնաշենք >> հասցե:
4. Հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Վերջիններիս վճարման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:
6. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 2026 թվականի N 563-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝
Որոշում եմ.

2026 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 11-00-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի Մշակույթի պալատի Սմարթ սենյակում գումարել Թումանյան համայնքի ավագանու հերթական նիստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 564-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 2008թ. հունիսի 10-ի <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, տրված՝ 25.09.2025 թ./ գրանցված է սեղանամատյանում N 5164, գործ թիվ 335/, Դսեղգյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումից քաղվածքները և քաղաքացի Էդիկ Գալուստի Անտոնյանի/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Ճանաչել Էդիկ Գալուստի Անտոնյանի /ծնված՝ 09/02/1951 թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0177-0018 ծածկագրում գտնվող 0,50112 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ: (Հողհատկացման հիմքերի վերականգնումը և իրավունքի ճանաչումը կատարվում է ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի դրույթների համաձայն, ընդհանուր հողատարածքը չի գերազանցում 20 % սահմանաչափը)
2. Ճանաչել Էդիկ Գալուստի Անտոնյանի /ծնված՝ 09/02/1951 թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0122-0009 ծածկագրում գտնվող 0,38246 հա մակերեսով վարելահողի նկատմամբ: (Հողհատկացման հիմքերի վերականգնումը և իրավունքի ճանաչումը կատարվում է ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի դրույթների համաձայն, ընդհանուր հողատարածքը չի գերազանցում 20 % սահմանաչափը)
3. Ճանաչել Էդիկ Գալուստի Անտոնյանի /ծնված՝ 09/02/1951 թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ 06-035-0151-0085 ծածկագրում գտնվող 0,01727 հա մակերեսով վարելահողի նկատմամբ: (Հողհատկացման հիմքերի վերականգնումը և իրավունքի ճանաչումը կատարվում է ՀՀ ՀՕ 64-րդ հոդվածի դրույթների համաձայն, ընդհանուր հողատարածքը չի գերազանցում 20 % սահմանաչափը)
4. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
5. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 565-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025թ. նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանը և հաշվի առնելով առնելով Դսեղ գյուղի բնակիչ Ռուզաննա Ռազմիկի Մուրադյանի /մուտք 16.10.2026թ. թիվ 1073/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0049-0007 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ, 5-րդ փողոց, 2-րդ փակուղի, 1 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հոկտեմբերի 2026 թվականի N 566-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-004-0008-0050,06-004-0008-0049 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՅՄԱՆՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով և 64-րդ հոդվածի 16-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ Կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Լոռի-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի փետրվարի 20-ի /հրապարակված փետրվարի 24-ին/ թիվ ԼԴ2/1563/02/22 վճիռը և Թումանյան քաղաքի բնակիչ Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել ԼԴ2/1563/02/22 վճռով Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի սեփականությունը ճանաչված գույքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.01947 հա մակերեսով հողամասի համաձայն <<Կարտոգրաֆ>>ՍՊԸ-ի կողմից կազմված և սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. Հաշվի առնելով Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի դիմումը իր սեփականությունը հանդիսացող 156.6 քմ ներքին մակերեսով գույքի նպատակային և գործառնական նշանակությունը հաստատելու մասին, հաստատել Լոենիդ Արամայիսի Մուքայելյանի սեփականությունը հանդիսացող 156.6 քմ ներքին մակերեսով գույքի նպատակային և գործառնական նշանակությունը որպես հասարակական նպատակային նշանակության խանութ:
3. Փոփոխել Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի սեփականությունը հանդիսացող գույքի՝ 156.6 քմ ներքին մակերեսով խանութի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 06-004-0008-0050 և 06-004-0008-0049 ծածկագրից առանձնացված 0.01947 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
4. Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի սեփականությունը հանդիսացող գույքի՝ 156.6 քմ ներքին մակերեսով խանութի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ և սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծով հաստատված 0.01947 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով /մասնավորապես 64-րդ հոդվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետով/ սահմանված կարգով ճանաչել Լեոնիդ Արամայիսի Մուքայելյանի սեփականության իրավունքը, պայմանով, որ սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման, իրավաբանական անձի բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) դիմաց բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) սեփականատիրոջը հանձնման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվում հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը համապատասխան համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի՝ վճարման պահին գործող կադաստրային արժեքը:

5. Սույն որոշմամբ նշված 156.6 քմ ներքին մակերեսով խանութի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 0.01947 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը չի առաջացնում հարկադիր սերվիտուտի իրավունք:
6. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան 3-րդ փողոց 1-ին նրբանցք,9 խանութ:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
8. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավար 02.10.2019թ. թիվ 103-Ա, 10.10.2019թ. թիվ 106-Ա, 01.06.2023թ. թիվ 147-Ա և 08.06.2026թ. թիվ 232-Ա որոշումները
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026 թ.
ք. Թումանյան